ՅԱՒԵԼՈՒԱԾ

# ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

**ՀԱՍՑԷ**

M. ARCHAM
Pos e Re-tan'e
*ATHENES (Grèce)*

*Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք յետ չեն ղրկուիր։ Ցօդուածներու պատշաճ դատուածները միայն պիտի հրատարակուին։*

**ԳԻՆ**

*Ամէն տեղերու համար գինն է*
*Տարեկան արծաթ ֆրանք 5*
*Վեցամսեան » » 3*
*Բաժնեգինները կանխիկ վճարելի են։*
*Փոստին ծախքը խմբագրութեան կը պատկանի։*
*Ծանուցումներ կ'ընդունուին դիւրամատչելի գիներով։*

Ա. ՏԱՐԻ — ԱԹԷՆՔ 1897 ՅՈՒՆԻՍ — ԹԻՒ 8


## ԶԻՋՈՒՄ ԵՒ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

(Շար. «Միութիւն»ի 11դ թիւէն)

Դաշնակցականները գործիչներ ղրկեցին ինչպէս Հնչակեանները, ժողովրդի ամէն խաւերու մէջ մտան, ելան, քարոզեցին, համոզեցին, հաղիւ հաղ կուսակցական հայերու մէկ փոքր մասը իրենց կողմը դարձուցին, այն ալ քանի մը տեղեր միայն, որոնց անունները յիշել անխոհեմութիւն կը համարինք։ Ստոյգ է թէ դէպի յեղափոխութիւն ասոնց առած քայլերը աւելի խոհեմ և լուրջ էին, բայց ոչ ցոյց ոչ ալ ձերբակալութեանց տեղի տուած, աչքի զարնելիք բան մը ըրած չըլլալնուն իրենց հակառակորդները չէին կրցած տապալել, և ատոր համար էր որ միշտ համակիր եղած էին միութեան դաղափարին, որուն համար փորձեր, առաջարկներ և բանակցութիւններ թէև անպակաս էին, բայց Պ. Նաղարբէկի յամառ «ես»ը և մանաւանդ Տիկնոջ այն խօսքը թէ՝ «Վարդս և Էլիգաս (իր երկու զաւակները) կը զոհեմ, «Հնչակ» անունը երբե՛ք» միութեան խնդիրը միանգամ ընդ միշտ ջուրը նետեցին։

* * *

Հնչակեանները Պապ-Սլիի ցոյցը կազմակերպեցին, Դրօշակեաններն ալ ուզեցին մասնակցիլ, առաջինները իրենց շահելիք փառքէն բաժին չի տալու համար, մեր ոյժը մեկի բաւական է ըսին և իրենց անխոհեմ ընթացքով հաղարաւոր անմեղ հայերու կեանքը զոհեցին, յետոյ յաղթութիւնը մեր կողմն է գոչելով կը պանծային, ուր որ Դրօշակեան մը տեսնէին մը ն տ ր ի կ տիտղոսով կը մկրտէին։ Այդ ատեններն էր որ Դրօշակեանները Թուրք կառավարութեան պէս տկարացած և իր մասնաճիւղերը կէս կազմալուծուած խարխուլ վիճակի մէջ էին։ Ինչպէս ընէին որ իրենց գոյութիւնը պահպանէին։ Օսմ. Պանքայի ցոյցը կազմակերպեցին։ Հնչակեանք առաջարկեցին յետաձգել ցոյցը և համերաշխութեամբ ընդհանուր շարժում մը առաջ բերել, Դրօշակեանները պատասխանեցին. «մեր ոյժը մեկի բաւական է, ձեր անցեալ տարուան թողած պակասը այս տարի մենք պիտի ամբողջացնենք» այսինքն ըսել կ'ուզէին թէ ձեր ցոյցէն ողջ մնացող հայերն ալ այս տարի մենք ջարդել պիտի տանք, ինչպէս որ ըրին։

* * *

Ներքին երկպառակտումներու հետեւանքը ըսինք թէ ազգի մը, ընտանիքի մը կամ ընկերութեան մը փճացումն է, Յունաստանի պարտութեան զօրաւոր պատճառին մէկն ալ կուսակցական երկպառակտումն եղած է։ Այսպէս ալ Հնչակեանք «ես»ի և «փառք»ի կռիւ մը յարուցանելով ժողովրդին արիւնով, դրամով և զոհողութիւնով առաջ բերած՝ թշնամին սարսափեցնող մեծ ազդեցութիւն մը փճացուցին, ժողովրդին արիւնը ու դրամը ի զուր վատնեցին, կուսակցութիւնը քայքայեցին և անոր դաղտնիքները հրապարակաւ թշնամւոյն առջև պարզեցին մեր մօրուքին մաղերն անգամ համրել տալով, ապարդիւն տուին վատ Թուրքին ընդարձակօրէն ճնշել, հալածել և բնաջինջ ընել հայ տարրը, գիտնալով որ հայ յեղափոխութեան տակն ու վրան լոկ աղմուկ մըն է։

Հոգ չէ որ Թուրք մայրաքաղաքին փողոցները հայու արիւնով ոռոգուեցաւ, բաւական է որ Դաշնակցականները Պանքայի ցոյցով իրենց գոյութիւնը ապահովեցին, ինչպէս Հիւանդ Մարդը Թեսալիան գրաւելով այսօր իր գոյութիւնը ապահով կը համարի Եւրոպայի մէջ։

Գոնէ Դրօշակեանք ի նպաստ ընդհանրութեան շահուն իրենց հակառակորդներուն ընթացքն արհամարհելով ԶԻՋՈՒՄ և ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ մը ցոյց տային... Բա՜ւ լիցի, Հնչակեան ներքին երկպառակտումներէն ալ օգտուելով ճիշդ Թուրք կառավարութեան Յունաստանի առաջարկած խստապահանջ պայմանները կ'առաջարկեն, այնպէս որ միութեան հարցը բերաննիս անգամ առնելու չենք, որովհետև այդ պայմաններով անկարելի կը դառնայ միութիւնը։

* * *

Կը տեսնե՞ս ուրեմն ընթերցող, լոկ հետեւող ժողովուրդ մը ազգին սիրոյն համար զոհած է իր կեանքը, պատիւը և ստացուածքը, իսկ մեր ղեկավարները փոխանակ անոր արդար պահանջին գոհացում տալու որ բարձրաձայն միութիւն կը գոչէ, ընդհակառակը անձնական նեղ հաշիւներու տակ իրարու դէմ զինուած եաական և փառասիրական աննպատակ կռուի մը մղուած կը սպառնան ազգութիւնը բոլորովին փճացնել։ Բաւական չէ՞ որ մինչև ցարդ անջատ ուժերով՝ առանձին գործելով մեր տունը քանդեցին, մեր գանկն ու ոսկորները փշրեցին, միթէ իրա՞ւունք ալ ունին մեր վերքերը դարմանելու միջոցները խորհելու իրաւունքէն ալ զրկել մեզ, առարկելով թէ մենք յեղափոխական գործին մէջ բաժին չունինք. ճիշդ այն հայրերուն պէս որոնք իրենց զաւակներուն լաւ ծեծ մը քաշելէն յետոյ խեղճերուն լալու ալ իրաւունքը չեն տար։

Այո՛, դո՛ւք, ով միութեան հակառակողներ, ուրկէ որ «միութեան» ձայն մը կը լսէք, որ կ'երեւի թէ ձեր անձնական փառքին, պատուոյն և բարոյական (չըսենք նիւթական) շահուն արատ կը բերէ, անմիջապէս ձեր գրիչն ու բերանը կը սկսի անիրաւի հայհոյանքներ տեղացնել ո և է անձնաւորութեան մը վրայ, որ կը համարձակի ճշմարտութիւնը հրապարակ բերել։

* * *

Դրօշակեանները կեդրոնացում և ապակեդրոնացում բառերը մեր աչքերուն շողացնելով կը յայտարարեն թէ միութեան հակառակ չեն և Դաշնակցութիւն բառն արդէն համերաշխութիւն կը նշանակէ։ Այո՛, բայց ի՞նչպէս։ Կոչում կ'ընեն բոլոր յեղափոխական, կուսակցական և ոչ կուսակցական հայերու և 2-3 կուսակցութեանց մասնաճիւղերու, որպէս զի փութան իրենց դրօշին տակ համախմբուիլ և միանալ։ Ահա այս ալ միթէ համերաշխութիւն և միութիւն չէ՞ որ կը պահանջէ Դաշնակցութիւնը։ Մենք կը զարմանանք թէ արդեօք մինչև հիմա հասկցած չե՞ն ժողովուրդը ինչ կը պահանջէ թէ իրենց գործին չի գար հասկնալ, քանի որ անգամ մը ջուրը պղտորուած է միթէ մաքրուելու պէտք չե՞ն զգար։ Երբ պետութիւնները իրենց առջև կունենան դժուարալոյծ խնդիր մը անմիջապէս դեսպանաժողով կը գումարեն և վերջ կուտան խնդրոյն, ինչո՞ւ ուրեմն Դաշնակցականները ըստ իրենց ծրագրի տրամադրութեան ընդհ. ժողով մը չգումարեն և միութեան հարցը նախապէս իրենց մէջ վիճաբանութեան ենթարկելէ յետոյ հրաւիրեն յեղափոխականաց և հայ հասարակութեան վստահութիւնը շահող մի քանի չեղոք արժանաւոր անձնաւորութիւններ և միուս կուսակցութեանց անդամներէն ամենավստահելի այն անձնաւորութիւնները միայն, որոնք ո՛չ անբարոյական, ո՛չ աւազակ և ո՛չ ալ մատնիչ են։ Ըստ մեզ կարելի չէ որ հին և նոր Հնչակեան կուսակցութեանց բոլոր անդամներն ալ առ հասարակ այդ պատերով վարակուած ըլլան։ Ժողովուրդը բարձրաձայն շարունակ կը գոչէ թէ խնդիրը անձնաւորութեան վրայ չէ, ընդհանրութեան շահուն համար է, հետեւապէս եթէ դուք կարող էք զօրաւոր փաստեր առաջ բերել և հաստատել անոնց վրայ ձեր վերագրած ածականները, ընդհանուր ժողովի մէջ հրապարակաւ վճռեցէք, այն ատեն պիտի տեսնէք որ անոնք խստիւ պիտի պատժուին նոյն իսկ իրենց համակիր ահաբեկիչներու ձեռքով։ Եթէ դուք ժողովրդի բաղձանաց համաձայն գործէք և անոր արդար պահանջներուն գոհացում տաք, ո՞վ է ձեզ հակառակողը, մենք կ'ուզենք մեր ազգի քայքայած վիճակը բարեկարգել, մեր ցաւերը դարմանել և մեր քաղցութիւնը անցնել։ Մենք ձեր ականջները խլացնելու չափ հազար անգամ պօռացինք անձնաւորութիւն չենք ճանչնար, ԱԶԳ կը ճանչնանք, միայն մէկ յեղափոխական կազմակերպութիւն և մէկ ծրագիր կը ճանչնանք։ Մէկ խօսքով ձենէ կը պահանջենք այն ԶԻՋՈՒՄՆ ու ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆԸ, զոր ցոյց տուաւ հայ ժողովուրդը մինչև վերջը, յայնժամ Հայկական ազատութիւնը կրնանք շահիլ անկասկած, երբ ունենանք «ՄԻԿ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԻԿ ԴՐՕՇԱԿ, ՄԻԿ ԲԱՆԱԿ»։

---

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

*Անկողմնակալութեան համար կը հրատարակենք հետեւեալը իբր պատասխան «Միութիւն»ի 9դ թուի մէջ հրատարակուած «Բաց Նամակ»ին։*

ՊԱՐԻԶ, 18 *մայիս*

*Յարգելի գաղափարակից*

*Լոնտոն հրատարակած մեր ընտապ ազգարարութեամբ զգուշացրել էինք միայն, որ մասնաճիւղերը իրենց նպաստները դադրեցնեն Հնչակեան կեդրոնները ղրկելուց, որպէս զի առաջը առնուէր անարատ նուիրատուութիւնների վատնուելուն։*

*Իսկ մեր թռուցիկների 4դ թերթով պարզեցինք թէ՝ «յեղափոխական գործերը չխոչընդոտելու և ուղիղ ճանապարհի վրայ դնելու միակ միջոցն է ընդունիլ շուտափոյթ ապակեդրոնացեալ ինքնավար ձեւը, յեղափոխականների կազմակերպութեան իւրաքանչիւր վայր պէտք է ընտրէ իւր վարչական մարմինը և յարաբերութիւն պիտի հաստատէ միւս շրջանների գոյութիւն ունեցող վարչութեանց (բիւրօ) հետ, բարոյական ընդհանուր կապը պահպանելու և իսկական միութիւնը յաջողցնելու համար, բարոյապէս պէտք է ձուլուիլ «Հայ Յեղ. Դաշնակցութեան» կազմակերպութեան մէջ։*

*Ձեր բաց նամակով չտապել էք պատասխանել մեր ազգարարութեան չլուսաբանած առաջարկին, թէ՝ «իրական փորձը ցոյց տուաւ որ մասնակի յեղափ. գործողութիւնները,*

միշտ ինքասաբեր կ'ըլլան մեզ։»

Մասնակի գործողութիւններ, մենք չէինք խրախուսել, այլ ընդհակառակը առաջարկել էինք ձուլումն բոլոր ոյժերի միութեան մէջ, ապակեդրոնացեալ ձեւով։

Ապակեդրոնացեալ համերաշխութեամբ մասնակի գործողութիւններ տեղի ունենալ չեն կարող, եթէ պէտք չըկայ, որովհետև մեր առաջարկի հիման վրայ իւրաքանչիր շըրջանի վարչական մարմինը պէտք է անպատճառ սերտ յարաբերութիւն ունենայ միւս բոլոր վարչութիւնների հետ։

Ապակեդրոնացեալի վարչութիւնը լաւ ծանօթ լինելով իր գործունէութեան շրջանի աշխարհագրական դիրքին, ժողովրդի բնաւորութեանը և կառավարութեան տեղային ոյժին, կը պատրաստուի այնպէս ու այն ձեւով միայն, որ դոցանից առաջ եկած խոչնդոտները յաջողութեամբ կարողանայ խորտակել։ Իսկ կեդրոնական կազմակերպութիւնը ունենալով մի ընդհանուր համատիպ ուղղութիւն, պատրաստուիլ ամեն վայրի մէջ նպատակայարմար կերպիւ երբեք չէ կարող, մանաւանդ մեր հայրենիքի բազմազան աշխարհագրութեամբ։

Դուք նկատել էիք թէ՝ «Սակայն պէտք է գիտնալ, որ մեր բոլոր ներքին կռիւները, այսօր «Հնչակ» և «Դրօշակ» անուններու վրայ են, արդէն ժողովրդի միտքը դայթակղած է, ուրեմն կարելի չէ ամբողջ ազգութիւնը այդ անուններուն մէկին կամ միւսին դրօշին ներքեւ համախմբել»։

Ծանօթ լինելով ներկայ հանգամանքներին, որպէս միակ հնարաւոր միջոց, մենք առաջարկել էինք թէ «իսկական միութիւնը յաջողցնելու համար, բացարձակապէս պէտք է ձուլուիլ «Հայ յեղափոխականների Դաշնակցութեան» կազմակերպութեան մէջ»։ Որովհետև այլ կերպի առաջարկով կը նպաստէինք միայն կուսակցութիւններու բազմանալուն։

* *

Մեր առաջարկած ձուլումը չէ կարող ոչ արժանապատուութեանց դէմ լինել և ոչ տեղի տալ ներքին կռիւների ու գայթակղութիւնների, որովհետև դաշնակցութիւն բառի նշանակութիւնը այնքան լայն է, որ իր մէջ ամփոփուելով և միութիւն և համերաշխութիւն բառերի բուն իմաստը։ Իսկ ձեր ակնարկութեան, օրգան թերթի անուան համար (որոյ հրատարակման մենք բոլորովին դէմ ենք, թէ նորա վրայ եղած զուր ծախքերի համար և թէ նորանից առաջ եկած վտանգների պատճառաւ), որի անունով չէ կոչուում յիշեալ կազմակերպութիւնը, նա կ'ունենայ «Դրօշակ» «Թնդանօթ» անունները, այդ բոլորը միևնոյն է և գայթակղութեանց ու կռիւների տեղի տալ երբեք չէ կարող։ Սակայն, եթէ դուք ևս մի շարք միամիտների նման, յեղափոխութեանը անպէտք օրգանների անունները, բոլորովին անտեղի կերպիւ, կը համարիք միութեան միակ խոչնդոտը, այն ժամանակ մենք այդպիսի թիւր հասկացողութեանց և մեկնութեանց ասելիք չունինք։

Պէտք է լաւ հասկնալ, բարեկա՛մ, որ յեղափոխութիւնը պատրաստուիս հրապարակախօսութեանց, երգիծաբանութեանց և բանաստեղծութեանց բոլորովին կարիք չունի, որոց փոխարէն գործնական յեղափոխութեան վերաբերեալ անհրաժեշտ գրքուածքները, կարող է հրատարակել վարչութիւններից ձեռնհասը, բրոշիւրի (գրքոյկ) ձեւով։

Ձեր միւս նկատողութեան, թէ՝ «Կ'ուզենք հասկցնել թէ, եթէ կ'ուզէք ձեր գաղափարները ծառայեցնել ազգային կենսական շահերուն, պէտք է համակերպիք ժողովրդի արդար պահանջին ու աշխատիք երկու կուսակցութիւնները հաշտեցնել և մի նոր ընդհ. ժողով գումարելով ջնջել այդ թերթերու անունները, և այդ ժողովի միացեալ հաւանութեամբ մի նոր անուն տալ, եթէ կ'ուզէք յեղափոխական գործը առաջ տանիլ»։

Մի թէ՞ իրաւ դուք կարծուումէք թէ ժողովրդի պահանջը թերթի անուն փոխելն է, և մի թէ՞ այդքան դիւրին էք համարում բոլոր յեղափոխականների մի ընդհ. ժողովի մէջ գումարումը, նորա վրայ լինելիք ահագին ծախքերի հայթայթումը և բոլոր յեղափոխականների մէջ հաշտութեան և միութեան բոպէական իրագործումը, այս խառնուած ժամանակ և այն էլ երկու Հնչակեան կեդրոններում նըստած մի շարք փառասէր անձնաւորութեանց ներկայութեամբ և գործակցութեամբ։

Սիալվում է՛ք, յարգելի գաղափարակից, ձեր քարոզներով և կեդրոնի գոյութիւնը ընդունելով, ներկայ հանգամանքներում, միութիւն առաջացնելու փոխարէն կ'ըստեղծենք մի նոր, չորրորդ կուսակցութիւն, միւս կազմակերպութիւններից զրժուած անձնաւորութիւնների հաւաքումով, մի ցաւալի և անիսուսափելի հետեւանք, որ անպատճառ տեղի կ'ունենայ, եթէ այդ ձևի առաջարկները ընդունուին։

Կեդրոնական կուսակցութիւնների բազմանալով, կը զարգանայ մի միայն չար նախանձը, իսկ ուր զրուելի նախանձը գոյութիւն ունի, այնտեղ բնականաբար ոչ մի համերաշխ քայլ անել չէ կարելի։ Իրար խանգարելու համար առաջանալիք սպառ միջոցների գործադրութեամբ։ Իսկ ապակեդրոնացեալի վարչութեանց մէջ կարող է առաջանալ միայն թարի մրցումն, որովհետև փոխակրելի գործը առանձին կը դասաւորուի, օրինակելի կարգապահութեամբ և գաղտնապահութեամբ, աւելի կամրապնդի ու համաչափ գործունէութեան սկիզբը կը դնէ։

Վերոյիշեալը և փոխական միութիւնը յաջողցնելու համար առ այժմ անհրաժեշտ է բարձրացնել Հայ յեղափոխականի գիտակցութիւնը և պէտք է քարոզել, ընդունելու շրջանական գործնական կազմակերպութեան ձևը, որով միայն կարելի կը լինի ոյժերը ի մի ձուլել, համերաշխութիւնը ի կատար ածել և իսկական յեղափոխութիւն առաջ բերել։

Ապակեդրոնացեալ կազմակերպութեամբ հայաբնակ վայրերում կարող ենք ունենալ 7–ից մինչև 9–ը շրջանական վարչական մարմին, որոց 3–5–ը գործունէութեան վայրէն դուրս, իսկ 4–ը բուն գործունէութեան վայրում, որոնք սերտ յարաբերութիւն ունենալով իրար հետ, ոյժեր ջլատող, մասնակի գործողութիւններ թոյլ տալ չեն կարող, եթէ այդ գործի շահերը չեն պահանջել։ Օրինակ՝ մի վարչութեան առաջարկով և բոլոր կամ մեծամասն վարչութեանց համաձայնութեամբ վճռուում ապստամբական մեծ շարժում առաջացնելը գործածութեան վայրի մի գեղեցիկ վարչութեանց շրջանների մէջ և վճռուում, որ թէ դրսի և թէ ներսի մնացած մարմինները, որոշեալ ժամանակի ընթացքում իրենց ամբողջ ոյժով հասնեն օգնութեան ապստամբողներին, որոնք անձամբ անմիջապէս հասցնում են օգնութիւնը և կարգապահ ու գաղտնապահ պատրաստութեամբ, ապստամբութիւնը բռնկեցնում վճռուած շրջանների բոլոր տեղերում միանուագ։ Իսկ կեդրոնականութեամբ այդպէս չէ կարող լինել, որոյ կոմիտէները անպայման ենթարկուում են կեդրոնի ամեն մի տեղի թէ անտեղի, խելք թէ յիմար հրամանին, որոնք օգնութեան պարագային առանձին առանձին նախ պէտք է դիմեն երկրորդ ձեռքի, իրենցից շատ հեռու կեդրոնի միջնորդութեան և ապա կեդրոնը ևս երկրորդ ու չորրորդ ձեռքերի աջակցութեան, կամ թէ իւրաքանչիւր կոմիտէ պէտք է հրահանգուի կեդրոնից նոյնպէս մէկիկ մէկիկ, որպէսի ուղղութեամբ քաղաքական ներկայ դժուարութիւնների պատճառաւ, երբեք չէ կարելի երաշխաւորել ոչ գաղտնապահութեան, ոչ կարգապահութեան և ոչ լուրջ պատրաստութեան, իսկ օգնութիւնը պէտք եղած ժամանակին չէ կարելի հասցնել, ինչպէս այդ ցոյց տուեց և փորձը, բայի դրանից կեդրոնը երբեք չի կարող ունենալ ձեռքի տակ, իր կոմիտէների ոյժի և պատրաստութեան ճիշդ քանակութիւնը։

Մասնակի շարժումներ կարող են տեղի ունենալ գործունէութեան վայրի թէ կոմիտէների և թէ յեղափոխութեան սկզբնական դժուարութիւնները հարթող հայդուկային խմբից։ Օրինակ, մի որ և է աւարառութեան կամ կոտորածի առաջն առնելու ժամանակ կոմիտէի բռնած պաշտպանութեան դիմադրութեամբ և խմբի, մի շրջանից միւս շրջանը, յեղափոխական պիտոյքները փոխադրելիս, որոնք անհակակալ են ուսանիսուսափելի և կեդրոնը դոցա առաջը առնել երբեք չէ կարող։

Ապակեդրոնացեալի վարչութիւնը գործելով իր շրջանի մէջ հաջողակաւորէն անհամեմատ աւելի հաջողութեամբ, գաղտնապահութեամբ և կարգապահութեամբ կը կատարէ իր ծանօթ վայրի յեղափոխական գործը, քան կեդրոնը—իր ներկայացուցչի ու նորա անհատական ինքնահաւանութիւնից առաջացած քրքանեակների միջնորդութեամբ։ Ո՛չ, բարեկամ, Հայ ժողովրդի և յեղափոխականների միահամուռ կամքն է տեսնել յեղափոխական գործը կազմակերպած և շուտ ի մի ձուլուած, այն ձևով միայն, որ չկրկնուին երբեք Հնչակեան կեդրոնական խնամէութիւնից առաջ եկած խայտառակ քայքայմանց դէպքեր և տղայական գործողութիւններ։

Ուրեմն, յարգելի գաղափարակից, տղաչանօք գործի սիրոյն, վարուեցէք շատ զգուշութեամբ. թէ չէ քաղաք Եւրոպայի մէջ գործնականութիւնից զուրկ կազմած ծրագիրը և քարոզները կ'ունենան այն հետեւանքը, որ յօնքը շիտակելու փոխարէն աչքը կը հանենք։

Ս. Գ.

# ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԷՆ

## ԶՄՇԿԱԾԱԳ, ապրիլ 20

Մարդակեր – Սուլթան – Համիտը ամենաբուռն միջոցներով կը շարունակէ իր սադայէլական արարքները, չի մնաց հայաբնակ վայր մը որ ազատ լինէր համիտական խժդժութիւններէն։ Այս վերջի երկու տարիները ա՛լ լրացուցին խեղճ Զմշկածագցիին դառնութեան բաժակը, թշուառութիւնը իր գագաթնակէտին հասած է, կոտորած, աւարառութիւն, հրձիգութիւն և բռնութեան տակ կրօնափոխութիւնը գերազանց քան բոլոր չարիքները։

1895 սեպտեմբերէն ի վեր անլուր եղերերգութեանց թուական մը սկսած է Զմշկածագցիին համար ալ։ Միատուն, Սիսանայ, Հաղարի, Կարմըրի, Արտակայ, Մուռնայի, Երէցագարակ, Մորըշխա, Բաղաբուն, Պռատի, Հաչտուն, Դէտրէթիլ, Հաղթոնք, Պռաստիկ, Օձդեղ, Պողոսի և այլն հայաբնակ գեղեր հուրի, սուրի և աւարի զոհ դարձան, սրբավայր ու աղօթավայր գաղանաբար քանդուեցան և պղծուեցան, ամեն մանրամասնութիւն թուել անկարելի է, զի անթիւ ու անհասանելի են...

Մահմէտի փոխանորդ, իսլամի Խալիֆան, քրիստոնեայ Եւրոպայի շահամոլ անտարբերութենէն քաջալերուած, իսլամութեան մահիկը խաչի դրօշէն վեր ու գերազանց կը ծածանեցնէ դարաւոր քրիստոնեայ Հայ ժողովրդի գլխուն։ Կեցցե՛ն քրիստոնեայ եւրոպացիները ու իրենց շահատակութիւնները, թող ձեռքերնին լուան մեր արիւնով և զոհունակութեան ու սիրտնանց հառաչ մը արձակելով ըսեն. «քաւեալ ենք մեք յարէնէ դորա»։

Թիմուր–Լէնկի, Ճինկիզխանի, Շահ–Աբասի և այլ միջին դարու բարբարոսներու ժամանակ իսկ չտեսնուած քրիստոնէական կրօնի դէմ հալածանքները, այս օրերս, 19դ դարու վերջերը, արձակ համարձակ կը գործուի Հայաստանի մէջ։ Այո՛, քրիստոնեայ Եւրոպան առանց չիկներու թող խոստովանի թէ՝ մեծ և ճշմարիտ է իսլամի կրօնը, անկից դուրս չկայ փրկութիւն։

Այժմ ընդհ. կրօնափոխութիւն մը կ'սպառնայ Զմշկածագի ամբողջ գաւառակին, անցեալ տարուայ կրօնափոխները կ'ուզէին վերադառնալ իրենց եկեղեցւոյն ծոցը, բայց կառավարութիւնը անկարելի ըրաւ։ Պատրիարքարան եղած շարունակական դիմումները երբե՛ք օգուտ մը և արդիւնք մը չունեցան։ Պատրիարքը անձրկած ոչինչ չէ կարող ընել, Դրան ըրած դիմումները ի՞նչ օգուտ ունեցան, եթէ երբեք Թուրքիոյ Հայոց Պատրիարքը կառավարութեան առջև չունի արժանավայել յարգ ու ազդեցութիւն թող հրաժարի, աւելի լաւ է որ Պատրիարքարանի դուռը փակուի, թրքամոլ ժողովականներ և խրտուիլակ Պատրիարք չունենանք։

Անցեալ տարուայ կոտորածէն գրեթէ քաղաքը զերծ մնաց, սակայն այժմ նոր կոտորածի մը սարսափը ընդհանրացած է։ Քաղաքին մէջ հայ խանութպանները չեն համարձակիր շուկայ իջնել, վախը մեր անբաժան ընկերն է, թշնամին անհամեմատ կերպով շատ է ի բայ առեալ կանոնաւոր զօրքերը։

Ողջ մնացող գեղացին խպառ պրկուած է ապրելու միջոցներէն, թափառական թռչուն մը՝ է կարծես, ո՛չ սերմանեց, ո՛չ ալ պիտի հնձէ։ Ապահովապէս համոզուէ ա՛լ ո՛ չինական Հայ, բահդ ու բրիչդ, արօրդ ու խոփդ քեզ չեն կարող փրկել, ատելութեան ու վրէժխնդրութեան ոգւով վառուած գոչէ դրացիներդ ալ ըսելով. «Արի՛ք փչրենք խոփ ու մանգաղ տանք դարբինին կռելու, կռել կոփել սուր ու սուսեր....» այն ատեն փրկութեան ճանապարհը շուտով կը գտնես.....

ՎԱՂԻՆԱԿ

# ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիա սպառնացած է հեռանալ եւրոպական համաձայնութենէն, երբ միւս տէրութիւնները ուզեն բռնի կերպով հեռացնել Թուրք զօրքերը Թեսալիայէն, խաղաղութեան պայմանները ստորագրուելէ առաջ։

Անգլիա Գերմանիոյ հակառակը պնդելով կ'ըսպառնայ նոյն համաձայնութենէն հեռանալ, երբ թրքական բանակը հաշտութիւն ստորագրուելէ առաջ Թեսալիայէն չի հեռանայ։

Սուլթանը իր մտերիմ բարեկամին՝ Գերմանիոյ կայսեր նուէր ղրկած է յոյներէն գրաւուած վեց հատ թնդանօթներ, ի նշան հաւատարիմ բարեկամութեան։

Կ. Պոլիս Ա.յ-Սթէփանօի մէջ ռուսերու կողմէ շինուելիք եկեղեցւոյն հիմնարկութեան հանդէսին ներկայ գտնուելու համար մօտերս Թուսիոյ մայրակայսրուհին և Նաբոլէոն Դ. ի կողակից՝ Եւգինէ թագուհին Կ. Պոլիս պիտի այցելեն։

Ռուսիոյ մայրակայսրուհին վեց մարտանաւով և 6000 զինուորով Կ. Պոլիս պիտի գտնուի, նոյն նպատակով արդէն 1500 ռուս զօրքեր Կ. Պոլիս հասած և մեծ մասամբ Այնօրօղ գնացեր են։ Պէյլէրպէյիի պալատը այս երկու վեհափառ հիւրերու տրամադրութեան տակ դրուած է։

Սուլթանը ուղած է կաշառով խափանել Բարիզի մէջ երիտասարդ Թուրքերու կողմէ հրատարակուած «Մէշվէրէթ» անուն թերթը, սակայն չէ յաջողած, որովհետև երիտասարդ յեղափոխականները արհամարհելով՝ թքած են Սուլթանին դեղին ոսկիներուն վրայ։

Գահիրէի գերմանական հիւպատոսը, նոյն քաղաքին մէջ հրատարակուող «Միւշիւր» անուն արաբերէն թերթը խափանել ուղած էր, վասն զի «Միւշիւր» հրատարակած է թէ 300000 հայերու արեան գին և յոյներու բայքայման համար Գերմանիոյ թրքաբարեկամ կայսրը, վեց միլիոն ֆրանքի պարգև մը ստացեր է իր մտերիմ Համիտ բարեկամէն։

Գաղղիական թերթերը, Ցունաստանի արդի կայութիւնը ճիշդ 1870–71ի պատահած ֆրանքօ-գերմանական պատերազմին իրենց պատահածներուն կը նմանցնեն։

Աթէնքի թաղապետական խորհուրդը Ռիչիոթի Կարիպալտին և Ամիլքար Զիվրիեանի՝ Աթէնք քաղաքին պատուակալ անդամ անուաներ է։

«Տէյլի-Բրօնիկլ» Պաթէմպէրկի իշխանին Կրետէի կուսակալ անուանուելուն լուրը հերքելով կ'ըսէ թէ՝ մեծ տէրութիւններէն և ոչ մին այս անուանումէն լուր ունի։

Պետութիւնները յունօ-թրքական պատերազմին խաղաղութեան պայմանները կնքելէ առաջ, ըստ Գաղղիոյ առաջարկին նախ պիտի լուծեն կրետական խնդիրը, որպէս զի ապագային համար իրենց ձեռք առած միջոցներուն դէմ Ցունաստան չկրնա նոր խոչնդոտներ յարուցանել։

Կ. Պոլսոյ դեսպանները յանձնախումբ մը կազմելով որոշած էին Թեսալիա ղրկել Անգլիոյ, Ռուսիոյ և Իտալիոյ դեսպանատանց քարտուղարները, որպէս զի մօտէն քննեն պատերազմի ծախքերը և վնասները, տեղեկագիր մը խմբագրուելով ներկայացուցին իրենց կառավարութիւններուն, բայց մինչև այսօր դեռ չեն մեկնած։

Զմոլէնքի զօրավարը Վէլէստինօի ճակատամարտին մէջ իր 8000 զօրքերով առիւծի պէս կռուելով՝ Ցունաստանի մէջ մեծ պատիւ ու ժողովրդականութիւն շահած էր, իր կնոջ հիւանդութեան առթիւ յանկարծ ամսոյս 4ին մայրաքաղաքս հասաւ, երկաթուղւոյ կայարանը անմիջապէս հաւաքուեցան հազարաւոր մարդիկ և կեցցէի աղաղակներով ջերմ ընդունելութիւն մը ըրին, հետեւեցան անոր մինչև տան առջև, ուր համբաւաւոր զինուորականը հետեւեալ խօսքերը արտասանեց. «Ի սրտէ շնորհակալ եմ ձեր առ իս ցոյց տուած համակրանաց ու պատուոյն, որուն արժանի չեմ։ Ամեն ինչ որ ըրած եմ լոկ զինուորական պարտականութիւնս կատարած եմ»։

Կ. Պոլսէն առնուած տեղեկութիւնները կը հաստատեն թէ զինուորական ակումբներու մէջ պատերազմական գաղափար կը տեսնուի։ Ոմանք անխուսափելի կը համարին պատերազմի վերսկսումն ի շնորհս նախարարապետ Խալիլ Ռիֆաթ փաշայի պատերազմասէր քաղաքականութեան։

Թուրք կառավարութիւնը հինգ կարգ պահեստի զօրքեր զէնքի տակ կը կանչէ։ Կ'ըսուի թէ քիչ ժամանակէն Եւրոպական Թուրքիոյ մէջ միայն զօրքերու թիւը 500000ի պիտի հասցնէ։

Աթէնքի թրքական դեսպանատան նախկին զինուորական կցորդ Շէյֆուլլա փաշա Բ. Գունէն պաշտօն ստանձնած է յունօ-թրքական սահմանագլխին մէջ փարեփոխումներ ընելու ծրագիր մը խմբագրել, զոր պիտի ներկայացուէր ամսոյս 5–6ին Կ. Պոլիս դեսպաններու դումարիլի ժողովին։

Ցունական թերթերը հրատարակեցին թէ Թուրք կառավարութիւնը լսելով որ շատ մը հայ կամաւորներ օսմ. զօրքերուն դէմ կռուելու գացեր են, կատղած վերսկսած է սաստկացնել իր սովորական հալածանքը հայերու դէմ։

«Արձագանգ»ի մէջ կը կարդանք. Ցոյներուն յաղթող Էթհէմ փաշան յունական ծագում ունի և քրիստոնէի զաւակ է, ծնած է Քիոս կղզին, սոսկալի և կատաղի թշնամի է քրիստոնէից և օտարականներու։ Իր եղբայրը Կ. Պոլիս կաթոլիկ եկեղեցւոյ քահանայ էր, ուր քանի մը տարի առաջ մեռած է։

## ՀԱՆՕԹՕ ՓԱՇԱ

Բարիզի «Էգօ տը Բարի» լրագրի թղթակիցներէն մին՝ նոյն քաղաքի «Էնթրանսիժան» անուն ընկերավարական հռչակաւոր լրագրի արտօնատէր Պ. Ռօշֆօրի հետ տեսութեան մը պահուն ըսեր է. «Գաղղիոյ հանրապետութեան արտաքին գործոց նախարար Պ. Հանօթօ՝ Եըլտզի պալատը Հանօթօ փաշա անուամբ ճանչցուած է։ Դահիճ Սուլթանը երբ օգոստոսին Կ. Պոլիսը արիւնլուայ ըրաւ, Պ. Հանօթօ զայն պաշտպանեց ու ջատագովեց։

«Համիտ գաղղիացի նախարարին ցոյց տուած համակրութենէն գոհ մնալով՝ անոր շնորհեց փաշայութեան աստիճան և Օսմանիէ պատուանշանը։

Պ. Հանօթօ պատուանշանը ստացածին պէս, ժապաւէնը վզին շուրջը անցուց, այլ աւա՜ղ որ ինքզինքը կախելու համար ընդունեց 300000 հայ նահատակներու սպանիչին նուիրած տիտղոս ու պատուանշանը։ Հանօթօ Սուլթանէն նկատուած է իբր հաւատարիմ ծառայ մը, որ միշտ իր հրամանները ճիշդ առ ճիշդ կը կատարէ ի վնաս Գաղղիոյ։»

Գաղղիոյ արտաքին գործոց նախարարը Ֆրանսացի չէ, այլ Համիտի ծառայութեան համար դրագիր մը և Թուրք ստորադասեալ մը։ Արդէն թրքական օրէնքը բացայայտ է, որ իւրաքանչիւր պատուակալ փաշայութեան աստիճանին բարձրանալով՝ ըստիպուած է հաւատարմութեան և հնազանդութեան երդում տալ իր վեհապետին։ Հանօթօի Օսմանիէ պատուանշանը տրուեցաւ յայտնապէս որոշեալ պայմաններով։

Գերմանացի սպաները Թուրքիոյ ծառայութեան մտնելով, գերմանական հանգամանքները կը կորցնեն, այնպէս Հանօթօ ալ կորսնցուցած է ֆրանսական հանգամանքները, վասն զի թրքական ազգայնութիւնը ընդունելու համար հարկ չկայ իսլամութիւնը ընդունիլ։ Հայերը թրքական տիրապետութիւնը Հանօթօէն շատ աղէկ կը ճանչնան, մինչդեռ այս վերջինը իր բոլոր զօրութիւնովը օգնեց Սպտիւլ-Համիտ բաշիբոզուկին հայերը ջարդելու համար։

Այժմ Հանօթօ երկու հայրենիք ապահոված է և միտքը դրած է առաջինը երկրորդին զոհել, իր ստոր դերին և փաշայութեան վայել երեք կատուի պոչի իրաւունք ունի, բայց կը կարծենք թէ երեք իշու պոչով գոհ պիտի ըլլայ, որոնք իր դերին լաւ պիտի յարմարին։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի

ՔԱՆԹԻՍ, 20 մայիս

Երէկ Բէտիյա կոչուած նահանգին Ղալիֆա գիւղին մէջ թրքերը ըսպանեցին 12 հոգի, 9ը այր 3ը կին։ Ցաճախ կը պատահի կռիւներ, սակայն նախորդ կռիւներու պէս մեծ կռիւներ չլինիր, քանզի Կրետէի մէջ գտնուող եւրոպացիք չեն թողուր։ Մեր ապստամբախումբը Քանտիայի ջուրը կտրած էր, անգլիական հիւպատոսը մեր գաւառանին նամակ մը գրելով պահանջեց որ ջուրը թող տրուի։ Կ'ըսուի թէ մօտ օրերս ինքնավարութիւն պիտի լինի, Կրետէի ժողովուրդը շատ ձանձրացեր է։

Ուտելիքի կողմէ շատ նեղն էինք, բայց հիմա նոր գարին ելաւ, հաց ունինք, սակայն ծխախոտի և աճառի նեղութիւն կայ։

ՍԻՄՈՆ

* * *

ԼԱՄԻԱ, 28 մայիս

Կ'ուզէի ստոյգ տեղեկութիւն մը տալ ձեզ հայ զօրքերու մասին, բայց որովհետև զանազան խմբերու կը պատկանին, չեմ գիտեր թէ որո՞նք վերադարձած են և տակաւին քանի՞ հայեր կը մնան Եպիրոսի և Թեսալիոյ զօրաբանակներուն մէջ։

Մենք այժմ 18 հայեր Լամիա կը գտնուինք, զինադադարի պատճառով հանդարտ ենք, առանց գիտնալու թէ պատերազմը պիտի վերսկսի՞ թէ պիտի խաղաղի, զինադադարէն յետոյ թուրք զօրքերը յառաջ քալեցին և 6 գիւղեր ևս գրաւելով հաստատուեցան, որուն պատճառը անծանօթ է մեզ։ Էթհէմ փաշայի զօրքերը հետզհետէ Լարիսա կը քաշուին։

Վէլէստինօի և Տօմօքօի ճակատամարտներուն մէջ 3 հայեր սպաննուեցան, որոնց մէկը ասպատակային խմբին կը պատկանէր։

ՍՏԵՓԱՆ

* * *

ՎՕԼՕՍ, 2 յունիս

Երկու օր առաջ աւստրիական շոգենաւ մը 500 թուրք պաշտօնեաներ բերաւ, որոնք պիտի հաստատուին ամբողջ Թեսալիոյ քաղաքներուն դատական և ոստիկանական ճիւղերու մէջ։ Թուրքերը երթալով հիմնապէս կը տեղաւորուին, հաստատելով մաքսային, ծովային և դատական պաշտօնատներ, այս օրերս քանի մը պաշտօնեաներ շրջակայ գիւղերը երթալով՝ իւղի, ձիթապտուղի և արմտեաց տուրքեր դրին։ Էնվէր պէյը շրջաբերական մը հրատարակեց Էթհէմի հրամանով, որ գաղթող բնակիչները եթէ 15 օրէն իրենց տեղերը վերադառնալով տէր չելլան իրենց շարժուն և անշարժ ընտացուածքներու, կառավարութենէն պիտի գրաւուին։ Տեղւոյս զինուորական և քաղաքային թուրքերու թիւը 2000ի կը հասնի, առ այժմ հանդարտութիւն կը տիրէ, միայն Թօփալիս անուն երեսփոխանին տունը կողոպտեցին, պատրուակելով թէ՝ յեղեալ անձը «Էթնիքի Էթէրիա»ի (Ազգային Ընկերութիւն) անդամ է եղեր։

ՌՈՒՄԱՆՈՑԻ

## ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ

Գահիրէի մէջ սկսած է հրատարակուիլ հայերէն նոր թերթ մը «Փարոս» անունով, շաբաթը երկու անգամ։

«Փարոս»ի հրատարակիչը, Ց. Ալվիար, ծանօթ գրագէտ մըն է և իր սուր ու մտացի յօդուածները միշտ հաճոյքով կարդացուած են։

Արտասահմանի մէջ քաղաքական, ազգային և գրական թերթի մը պէտքը միշտ զգալի եղած էր և կը յուսանք որ «Փարոս» պիտի կրնայ գոհացնել զայն։

Ցաջողութիւն կը մաղթենք մեր նոր պաշտօնակցին։

«Փարոս»ի հասցէն է. Խմբ. «Փարոս»ի—Պազար Մուրատ, Գահիրէ

Ամերիկայ գտնուող Օհան Կիւլէսէրեան և Գէորգ մանուկեան պարոնները թող հաճին հասցէներնիս իմաց տալ իրենց ազգականին խմբագրուր թեանս սիջոցաւ։

# ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

ԳԱՀԻՐԷ, 22 Մայիս

Գրեթէ 3-4 տարիներէ ի վեր արտասահմանի հայերը գուշակելով Ազգին կրելիք ապագայ վնասները երկու յեղ. մարմիններու միութեան կարեւորութիւնը զգացած էին, բայց երբեք չէր տեսնուած գործնական դեր մը այդ հարցի նկատմամբ, որովհետեւ Հնչակեան միապետներն ու Դաշնակցական եսասէրները, իրենց մոլութիւններովն իրարմէ տարբերութիւն չունենալով բնա՛ւ մերձեցում չէին ըրած՝ այլ կը ջանային մէկզմէկու դիջանեցնել։

Մօտերս ուրախութեամբ տեղեկացանք Հնչ. կուսակցութեան պաշտօնաթերթին «Մարտ»ի Ա. թիւէն որ պատգամաւորական ընդհ. ժողովը գէթ ջնջած է իր մէջ եղած միութեան խնդրի արգելք հանդիսացող խոչընդոտներուն ամենէն զօրաւորը, և լիազօր իշխանութիւն տուած է վերակազմուած Կեդր. Վարչութեան որ բանակցութիւններ ընեն Դաշնակցականաց հետ, ընդհ. միութիւն մը կամ համերաշխ գործակցութիւն մը յառաջացնելու միտումով, որուն համար Հնչ. Նորակազմ Վարչութիւնը 5-6 ամիսներ առաջ դիմում ըրած է «Դրօշակ»ի խմբագրութեան միջոցաւ Դաշնակ. ձեռնհաս մարմիններուն, որպէս զի բանակցութիւններ ըլլան միութեան խնդրի նկատմամբ, բայց դժբաղդաբար մինչև ցարդ Դաշնակցականներու կողմէ ոչ է պատասխան չէ տրուած և ընդհակառակը եղած շարժումներէն կը հետեւցուի թէ «Դրօշակ»ի խմբագրութիւնը աւելի պարզը ըսելով ապիկար Նաղարբէկեաններէ բաժնուող կուսակցամոլ ժընէվականները փոխանակ գոհացում տալու Հնչ. կուսակցութեան պահանջին, որ ընդհ. Ազգին ալ փափաքն է, փառասիրութենէ մղուած տեսնելով Հնչ. կեդրոններուն լկտի կռիւները և երեւան եկած խել մը յեղափոխավառ գրութիւնները քաջալերուեցան և արդէն աչքերնին ալ չլացած էր Պոլսոյ մի քանի ռումբերու պայթումէն, որոնք մի միայն 15-20000 հայու (գաւառներով) կոչուստեանը և 40-50000 հոգւոյ թափառական հրէայ դառնալնուն պատճառ եղած էին, կարծելով թէ պիտի կրնան հայ հասարակութիւնը ցնորական եղանակներով իրենց քմահաճոյքներուն ծառայեցնել, սկսան ամեն տեղ հրահանգներ տալ Դաշ. կոմիտէներուն որպէս զի ուժերնին կրկնապատկելով յաջողին ոչնչացնել 8-10 տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող կուսակցութիւն մը և բոլոր յեղափոխական փառքը իրենց վերագրել, երանի՜ թէ այդ կերպով ըլլար ընդհ. միութիւն մը, բայց դա անկարելի է որովհետեւ այժմ ժողովուրդը սկսած է աւելի Նոր-Հնչակեաններուն համակերպիլքան թէ Դաշնակցականներուն։

Նաև նոյն թերթի մէջ հրճուանօք կարդացինք հետեւեալ տողերը.

«Միութեան համար երկու կուսակցութեան կողմէ նշանակուած լիազօրները իրենց խորհրդածութիւններն ու բակակցութիւնները կրնան կատարել հետեւեալ ծրագրին վրայ.

Ա. Ի՞նչ է ուղղակի նպատակնիս։

Բ. Ո՞րն է անոր հասնելու ապահով միջոցը։

Առաջինին պատասխանը շատ հեշտ է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ։

Գալով երկրորդին, երկու կողմէ նշանակուած լիազօրները բանակցելու ատենին Դաշ. պրն. ներկայացուցիչները կրնան ըսել թէ մենք չենք կրնար միանալ Հնչ. այս ինչ անհատներու հետ որոնք կասկածելի են մեզ իրենց անցեալովը, փոխանակ ժողովրդին մէջ անտեղի լուրեր տարածելու թէ՝ Հնչ. Կեդրոնական Վարչութեան անդամներուն մի քանիները լրտեսներ են եղեր ժամանակաւ ուրեմն ինչո՞ւ միանանք ատոնց հետ, մեր գործունէութիւնները թրքական կառավարութեան կը հաղորդեն և յեղափոխական գործը կը վտանգեն, շատ բարի Դաշ. պրն։ Խմբագիրներ, եթէ դուք անկեղծութեամբ հայուն փրկութեանը աշխատող յեղափոխականներ էք ինչո՞ւ անմիջապէս բանակցութիւններ ընելով չէք ջանար վնասակարները հեռացնել յեղափոխական ասպարէզէն որ վնասաբեր չըլլան։

Արդեօք չէ՞ք տեսներ որ գրեթէ Հնչ. բոլոր կազմակերպութիւնները այժմ նորակազմ վարչութեան ազդեցութեան տակ է, ուրեմն ըստ ձեր յայտարարութեան եթէ ակնարկուած անհատները իրօք մատնիչներ են, հայ հասարակութիւնն ալ անցեալի մէջ Նաղարբէկեաններու ընթացքէն փորձուելով, ձեր վրայ ևս կասկածելու իրաւունքը ունի թէ՝ դուք ալ կատարեալ եսասէր, փառասէր և շահախնդիրներ էք, որ խաբուսիկ և անկարեւոր փաստերով կը հակառակիք միութեան զանոնք յեղափոխական վեհ գործին մէջ թողելու հնարմամբ, որպէս զի ազդաւետս դերեր կատարելով երկրին ժողովուրդը սչնչացնեն որ ապագային ձեր գործառնութեանց հաշիւ պահանջողներ չգտնուին. եթէ սխալ է այս կարծիքը ուրեմն, ո՜վ եղբայրներ և մէկ Հայրենիքի օգտին աշխատող յեղափոխական ընկերներ, եթէ անկեղծութեամբ Հայ ազգին փրկութեանը նախանձախնդիրներ ենք մոռնանք կուսակցական անուններն, անձնական վէճերն ու ատելութիւնները, անհատական փառքերն և շահերն անմիջապէս ի մի ձուլուինք և մեր բոլոր մտածումները կեդրոնացնենք տառապեալ հազար անգամ տառապեալ Հայ ժողովուրդի փրկութեանը եղանակներուն վրայ, այլ ևս երկրին ժողովուրդ ո՛չ Հնչակեան է ո՛չ ալ Դաշնակցական, մի միայն իրենց ազգակիցներուն կոչուստեանը վրէժխնդրութիւնովը լեցուած՝ անհամբեր զէնքի կ'սպասեն որ կատարվի վպրերու պէս փարատեն արիւնարբու թշնամին, աւիթէն օգտուելով զէնք տանք, զէ՛նք, զէ՛նք և պիտի տեսնենք Հայկական դրօշակին ծածանումը։ Իսկ եթէ այս անգամ ալ մեր անձնական կիրքերովը անկանգնող դանուինք ժողովրդի արդար պահանջներուն գոհացում տալու, մեր ամենքին երեսին թքնելէն վերջ՝ առաջին անգամ մեր վրայ պիտի փորձեն իրենց վրէժխնդրութեան կատաղութիւնը, զգուշանանք ընկերներ, զգուշանանք ժողովրդին անէծքէն և ատելութենէն, ալ հերի՛ք է, հերի՛ք է կը պօռան մեր եսասիրութեանց, փառասիրութեանց և շահասիրութեանց համար, Հայրենիքը քանդուած է մեր կուսակցամոլութիւններէն, Հայրենիքի անպաշտպան զաւակները բանտերու մէջ կը հիւծին, մինչդեռ մենք արտասահմանի մէջ կուսակցական կեդրոնացումով և ապակեդրոնացումով կ'զբաղինք։ Հայրենիքի մեր ազգակիցները սովամահ կ'ըլլան, իսկ մենք... այլ ևս հերի՛ք է ընկերներներ, հերի՛ք է մեր ըրած շահատակութիւնները և ցնորական գործունէութիւնները, քիչ մըն ալ ժողովրդին օգտին համար անոր ձայնին անսալով ի մի ձուլուինք և յետոյ դիմենք իր աջակցութեանը որ փոխանակ զզուանք և ատելութիւն մեր վրայ հրաւիրելու՝ համակրութիւն գրաւելով աջակցութիւններին վայելենք։

ԱԲԳԱՐ

# ԿՈՉ

## Ա Ռ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Ն ԵՒ ԱՌ ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հետեւեալ Կոչումները ստացած ենք Վառնայի Միութեան համակրող ընկերներէ, որ արժանի սեպելով կը փութանք հրատարակել և միանգամայն ժողովրդին ու կուսակցութեանց ուշադրութիւնը կը հրաւիրենք։

Ներկային այս տագնապալի ճրագնաժամուն մէջ երբ Հայ ազգը կոտրածի ու գաղթականութեան ձեռքով խսպառ ջնջվելու վտանգին մէջ է, երբ անհուն թշուառութեան մէջ տառապող Հայը յուսահատութիւնից լայ ու կոծում է. կո՛չ ենք անում ձեզ հարուստ ու աղքատին, խորհող ու անձնազոհին, իւրաքանչիւրն մէջտեղ բերել իր բաժինը սրբելու տառապող մեր եղբարց ու մեր աւերակ հայրենեաց արտասուքն, կո՛չ ենք անում ձեզ չի խաբուել այլ ևս այն ինքնակոչ մարդերու բանակէն որ ազատութեան սուրբ դիմակի տակէն զմեզ կողոպտում ու իրենց փառքին համար զմեզ զոհում են, ա՛լ բաւ է, ուշքի գանք, ալ ամո՛թ է ո՛վ պրն. յեղ. արդի ներկայացուցիչներ, ձեզ ևս յանուն մարդկութեան կոչ ենք անում ձգել կուսակցական խեռ ոգին, փառք, շահասիրութիւն, սկրզբունք և միանալ անյապաղ, այո՛ ձրիակեր պարոններ շահասիրութիւն, զի կուսակցութեանց միացումը ուղղակի ձեր շահերուն է վնասում, մեղք է, կ'օգտէ ալ որչափ ձեր «ես»ին համար զոհեցիք ու զոհել կ'ուզէք անմեղ հայութեան մէկ մեծ մասը, տեսէ՛ք անոնց արիւնլուայ դիակները ու խղճի եկէք ո՛վ անխիղճներ, նայեցէք դա խողխողված անմեղ մանուկներուն, ատոնք ձեր եսասիրութեան զոհն են, անոնց արիւնը վրէժ կը գոռայ, սթափեցէք անխիղճնե՛ր, Հայ ազգը անցեալոյն դառն փորձէն լիովին ընդունած է միութեան օգուտները, ազգին կամքը միութիւն է, և դուք դեռ պիտի ուզէ՞ք ասանկ անջատ անջատ գործելով ազգին վնասաբեր ըլլալ. եթէ ատանկ է պակաս ըլլան ձեզի պէս ազգին գլխուն փորձանք յեղափոխականները, ձեր այժը ժողովուրդն է, ժողովուրդի կամքն է միութիւնը, պէտք է որ ըլլայ այն և պիտի ըլլայ....

Ճիշդ ալ ասոր համար դիմումնք ձեզ վճռապէս պահանջում որ միանաք և կ'ուզենք որ ամեն կուսակցութիւն իր օրկանին կամ թեռուցիկի միջոցաւ հրապարակ հանեն թէ ի՞նչ է իրենց վերջնական պատասխանը, այո թէ ոչ. ու եթէ պիտի գործեն թող շուտափոյթ գործի ձեռնարկեն, հակառակ պարագային երբ տեսնենք որ գործերը կ'ընթանան ճիշդ հիմակուայ դրութեամբ, մենք ալ ջանինք մեր ծրագիրը, մենք ալ որոշած ենք մեր անելիքը... Այսքան աղնիւ ոյժեր դեռ մինչև երբ անաղնիւ, անպիտան ու ինքնակոչ առաջնորդներու ձեռք խաղալիք ըլլան, օ՛ն ահապարենք ժամանակ է գործելու։

Միութեան փափաքողներ
Ի Դիմաց Վարչութեան

97 ապրիլ 18

| | |
|---|---|
| Ատենապետ | Ատենադպիր |
| ԶԱՐԵՀ | ՈՒԽՏԱՒՈՐ |
| Գանձապահ | Տեռօրապետ |
| ՄԻՀՐԴԱՏ | ՎԱՐԴԳԷՍ |

* * *

Մեր պաշտելի հայրենեաց մռայլ հորիզոնին վրայ սեւագոյն Մայր-Հայաստանի սարսռազդեցիկ վեհ ոգին, յուսահատ ճիչերով օգնութիւն կը գոչէ։ Անէ՛ծք մարդկութեան, այսօր ամբողջ աշխարհ ուրախ ուրախ խարոյկին շուրջը բոլորված դիտում է զոհուիլը մարտիրոս հայութեան, ու ժողովուրդի ցաւերուն, անոր քաշած տառապանքներուն մարմնացումը եղող այն սաւառնեալ ոգին մերթ արտասուաթոր մեզ է աղերսում մերթ սպառնալից մեզ է կշտամբում։ Ա-նէ՛ծք ու կատաղութիւն... մեզ կողոպտեցին, մեզ չարչարեցին ու ըսպանեցին, ու հայը ներկային այս զարհուրելի կացութեան մէջ սոսկալով կը դիտէ դեռ ապագային արհաւիրքը։

Ամբողջ ազգը այս դժնդակ կացութեան մէջ ձեզ աղերսեց, լացաւ ու խնդրեց, ձեզ ո՛վ պրն. յեղ. գործիչներ, որ ազգին ճակատագրին հետ խաղալու իրաւասութիւնը չգիտեմ ինչպէս ունեցեր էք, ձգելով պահիկ մը կուսակցական նկատումներ, գալ համախմբուիլ դարման մը խորհելու դէպի անդունդը գահավիժող թշուառ հայուն, բայց այդ ժողովուրդը երէկուանը չէ այսօր կը պօռայ վաղը պիտի սպառնայ...

Ու մենք ժողովրդի այդ արդար վրէժխնդրութեան իբր թարգման, ըլլանք իսկ մի ափ, որպէս կը կարծեն որ ենք, բայց կամքի տէր եթէ մէկ հատիկ իսկ մնանք, պիտի կռուինք այն հաստատ հաւատքով թէ օգտակարագոյն է մեր արածը, թէ մեր եռեւը պիտի ձգենք դործ մը որ արդէն վաղուց ազգը կը փափաքէր տեսնել։

Միացէք եթէ ո՛չ պիտի միացնենք, ահա՛ այս է մեր ծրագիրը, ազաչանքի ականջ չդրիք, սպառնալիքի դէմ խնդացիք ու միշտ պիտի յամառի՞ք այսպէս ընդդիմանալ, լաւ ուրեմն ալ ժամանակը հասած է գընահատելու ձեր «ես»ն ու «գործունէութիւն»ը։

Ուրեմն պրն. ներկայացուցիչներ, կոմիտէի կամ նահանգային վարչ. անդամներ, կամ միացէք կամ գործադուլ եղէք, քաշուեցէք, ուր որ ալ ըլլաք մի ջանաք ալ ձեր անձնական հաշիւներուն համար ժողովուրդը պառակտել ու ուզածնուդ պէս խաղցնել յիմարական յոյսեր ներշնչելով անոր։ Հեռացէք, եթէ չէք ուզեր գնահատուիլ։

Թող ամեն տեղ ու ամեն մարդ ինքզինքը խորհի ու գործէ։

Տասնըհինգ օր պայմանաժամ ամեն տեղի համար որպէս զի խորհիք։

19 Մայիս 97էն սկսելով, ուրիշ ետ մենք ալ պիտի սկսինք վճռական գործողութեանց։

ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՓԱՔՈՂՆԵՐՈՒ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի